ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-4/1-1

ք. Երևան 03.04. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և անհատ ձեռնարկատեր Մեժլում Գրիգորյանը, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման

դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 33000000 (երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ք. Երևան Բագրևանդի 5	ք.Աբովյան 4 մկրշ. շ. 11 բն.20
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 205113205384
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 43078315
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Անհատ ձեռնարկատեր
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-4/1-1 պայմանագրի

Գնման ժամանակացույց և տեխնիկական բնութագիր

Տեխնիկական բնութագիր

Հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում /Կամացու Դ-355 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ/)	Վերանորոգումն ըստ Կամացու Դ-355 տեխնիկայի տեխնիկական նկարագրության և շահագործման հրահանգների: Ըստ ճապոնիայի «Կամացու» ԲԲԸ-ի կողմից թողարկված վերանորոգման ձեռնարկների

Ծանոթություն.

1. Վերանորոգումը իրականացվելու է ՀՀ ՊՆ 13516 զորամասի տեխնիկայի գտնվելու վայրում (առաջնագծում), միջին հեռավորությունը մեկ ուղղությամբ մոտ 200 կմ հաշվարկով:
2. Վերանորոգման ծառայություններն իրականացնելիս պահեստամասերը կարող է տրամադրվել ՀՀ ԶՈՒ ԻԶ վարչության կողմից:
3. Մեծածավալ պահեստամասերի տեղափոխումը, ավտոկռունկի և եռակցման ագրեգատի հատկացումը իրականացվելու է ՀՀ ՊՀ 13516 զորամասի կողմից:
4. Ծառայությունների մատուցումը իրականացվում է ՀՀ ԶՈՒ ԻԶՎ հայտերի հիման վրա:

Գնման ժամանակացույց

Հ/հ	*Ծառայության անվանումը*	*Չափի միավ.*	*Առավելագույն գումարը*	**Ծառայությունների մատուցումը 2018թ. 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ 10.12.2018թ.**
1	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում /Կամացու Դ-355 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ/)	դրամ	33000000	Համաձայն պատասխանատու ստորաբաժանման հայտերի

Ծանոթություն. Ծառայությունների մատուցումը իրականացվելու է 2018թ. ընթացքում,ըստ ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից ներկայացված հայտերի, առավելագույն գումարը չի կարող գերազանցել 33 000 000 (երեսուն երեք միլիոն) ՀՀ դրամը:

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափ. միավոր	Ծառայության և պահեստամասերի միավորի գինը ՀՀ դրամ
	Ծառայություններ		
	I ՇԱՐԺԻՉ		
1	Շարժիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	295000
2	Շարժիչի արատավորման ծառայություն	հատ	50000
3	Շարժիչի բլոկի մաքրման ծառայություն	հատ	20000
4	Շարժիչի մասերի մաքրման ծառայություն	հատ	20000
5	Շարժիչի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների /միջադիրներ, խցիչներ/ փոխարինման ծառայություն	հատ	20000
6	Շարժիչի հիմնական ներդրակների հանման տեղադրման ծառայություն	հատ	55000
7	Շարժիչի հիմնական ներդրակների հանման տեղադրման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	28000
8	Շարժիչի շարժաթևային ներդրակների հանման տեղադրման ծառայություն	հատ	60000
9	Շարժիչի մեկ հատ մխոցի մխոցային օղերի փոխարինման ծառայություն	հատ	6800
10	Շարժիչի մեկ հատ գլանի հանման տեղադրման ծառայություն	հատ	10000
11	Շարժիչի մեկ հատ մխոցի հանման տեղադրման ծառայություն	հատ	10000
12	Շարժիչի մխոցի մեկ հատ մխոցամատի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
13	Շարժիչի մեկ հատ շարժաթևի հանման տեղադրման ծառայություն	հատ	9000
14	Շարժիչի մեկ հատ շարժաթևի հանման տեղադրման ծառայություն(8401.12 շարժիչի)	հատ	7000
15	Շարժիչի մեկ հատ շարժաթևի ականոցի փոխարինման ծառայություն	հատ	2000
16	Շարժիչի յուղի պոմպի ստենդավորման ծառայություն	հատ	15000

17	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	25000
18	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	25000
19	Շարժիչի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
20	Շարժիչի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	15000
21	Շարժիչի քարտերի հանման և տեղադրման ծառայություն	հատ	50000
22	Շարժիչի մեկ հատ գլխիկի կափարիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	4800
23	Շարժիչի մեկ հատ գլխիկի հանման և տեղադրման ծառայություն	հատ	20000
24	Շարժիչի գլխիկի մեկ հատ արտածման փականի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
25	Շարժիչի գլխիկի մեկ հատ ներածման փականի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
26	Շարժիչի բաշխիչ լիսեռի հանման և տեղադրման ծառայություն	հատ	24000
27	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ ականոցի հանման տեղադրման ծառայություն	հատ	5800
28	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ հրիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	4000
29	Շարժիչի ծնկաձև լիսեռի հանման և տեղադրման ծառայություն	հատ	70000
30	Շարժիչի ծնկաձև լիսեռի մեկ հատ ատամնանիվի հանման տեղադրման ծառայություն	հատ	24000
31	Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկման ծառայություն	հատ	270000
32	Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկման ծառայություն	հատ	10000
33	Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգման ծառայություն	հատ	20000
34	Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի վերևի և ներքևի կիսաօղերի հանման տեղադրման ծառայություն	հատ	14000
35	Շարժիչի մեկ հատ թողարկիչ կոլեկտորի հանման տեղադրման ծառայություն	հատ	4500
36	Շարժիչի ջրի /աջ, կամ ձախ/ խողովակի հանման տեղադրման ծառայություն	հատ	4500
37	Շարժիչի մեկ հատ վառելիքի խողովակի հանման տեղադրման ծառայություն	հատ	2000
38	Թափանիվի հանման և տեղադրման ծառայություն	հատ	7000
39	Թափանիվի ատամնավոր օղագոտիի հանման տեղադրման ծառայություն	հատ	14000
40	Շարժիչի քարտերի պաշտպանիչի հանում և տեղադրում	հատ	25000
41	Շարժիչի յուղի ռադիատորի հանման և տեղադրման ծառայություն	հատ	35000
42	Շարժիչի յուղի ռադիատորի վերանորոգման ծառայություն	հատ	48000
43	Շարժիչի թափանիվի քարտերի հանման և տեղադրման ծառայություն	հատ	10000
44	Շարժիչի մեկկ հատ փոկի հանման տեղադրման ծառայություն	հատ	4900
45	Շարժիչի գեներատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
46	Ստարտերի հանման տեղադրման ծառայություն	հատ	25000
47	Ռեդուկտրի հանման տեղադրման ծառայություն	հատ	55000
48	Առանցկակալի և ատամնանիվի հանման տեղադրման ծառայություն	հատ	45000
	II Սնուցման համակարգ		
49	Վառելիքի մեկ հատ բաքի հանման և տեղադրման ծառայություն	հատ	55000
50	Վառելիքի բաքի մաքրման ծառայություն	հատ	14000
51	Վառելիքի խողովակալարերի հանման տեղադրման ծառայություն	հատ	14000
52	Ցածր ճնշման վառելիքի պոմպի հանման և տեղադրման ծառայություն	հատ	14000
53	Բարձր ճնշման վառելիքի պոմպի հանման և տեղադրման ծառայություն	հատ	25000
54	Բարձր ճնշման վառելիքի պոմպի և բոցամուղերի ստենդավորման ծառայություն	հատ	40000
55	Բարձր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում	հատ	75000
56	Բարձր ճնշման վառելիքի մեկ հատ բոցամուղի հանման և տեղադրման ծառայություն		5000
57	Բարձր ճնշման վառելիքի պոմպի շարժաբերի հանման և տեղադրման ծառայություն	հատ	29000
	III Գազի արտանետման համակարգ		
58	Խլացուցիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	10000
59	Տուրբոճնշակի հանման տեղադրման ծառայություն	հատ	45000
60	Տուրբոճնշակի վերանորոգման ծառայություն	հատ	38000
	IV Հովացման համակարգ		
61	Ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	125000
62	Ռադիատորի վերանորոգման և մաքրման ծառայություն	հատ	75000
63	Ռադիատորի կախոցի մեկ հատ բարձիկի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
64	Ռադիատորի հովվացուցիչի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
65	Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	25000
66	Շարժիչի ջրի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	20000
67	Հովացման մեկ հատ խողովակների հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
68	Օդի ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	30000
69	Օդի ռադիատորի մաքրման կամ վերանորոգման ծառայություն	հատ	40000
70	Հովհարի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
	V Կցորդում		
71	Հիդրոտրանսֆորմատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	85000
72	Հիդրոտրանսֆորմատորի վերանորոգման ծառայություն	հատ	308000
73	Հիդրոտրանսֆորմատորի մաքրման ծառայություն	հատ	35000
74	Հիդրոտրանսֆորմատորի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
75	Հիդրոտրանսֆորմատորի կափույրների հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
76	Հիդրոտրանսֆորմատորի կափույրների մաքրման ու վերանորոգման ծառայություն	հատ	50000
77	Հիդրոտրանսֆորմատորի յուղի հովվացման ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	45000

78	Հիդրոտրանսֆորմատորի օժանդակ կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	20000
	VI Հիդրավլիկ համակարգ		
79	Հիդրոբաքի հանման տեղադրման ծառայություն	հատ	60000
80	Հիդրոբաքի քանդման և մաքրման ծառայություն	հատ	50000
81	Հիդրոբաքի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	34000
82	Հիդրոբաքի կափույրի փոխարինման ծառայություն	հատ	40000
83	Հիդրոգլանների հանման և տեղադրման ծառայություն	հատ	40000
84	Հիդրոգլանների վերանորոգման ծառայություն	հատ	48000
85	Հիդրոգլանների մաքրման ծառայություն	հատ	50000
86	Ղեկային մեխանիզմի կառավարման վահանակների հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
87	Ղեկային մեխանիզմի կառավարման վահանակի վերանորոգման ծառայություն	հատ	25000
88	Հիդրավլիկայի բաժխիչի հանման տեղադրման ծառայություն	հատ	75000
89	Հիդրավլիկայի բաժխիչի վերանորոգման ծառայություն	հատ	60000
90	Հիդրավլիկայի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	48000
91	Հիդրոգլանի խնձորակի փոխարինման ծառայություն	հատ	20000
92	Հիդրոգլանի կափյուրի հանման տեղադրման ծառայություն	հատ	25000
93	Հիդրոգլանի կափյուրի վերանորոգման ծառայություն	հատ	20000
	VII Փոխանցման տուփ		
94	Փոխանցման տուփի հանման տեղադրման ծառայություն	հատ	412000
95	Փոխանցման տուփի քանդման և արատավորման ծառայություն	հատ	45000
96	Փոխանցման տուփի մասերի մաքրման ծառայություն	հատ	25000
97	Փոխանցման տուփի հավաքման ծառայություն	հատ	350000
98	Փոխանցման տուփի կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	110000
99	Փոխանցման տուփի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	58000
100	Փոխանցման տուփի մեկ հատ օղի փոխարինման ծառայություն	հատ	10000
101	Փոխանցման տուփի մեկ հատ սկավառակի հանման տեղադրման ծառայություն	հատ	2800
102	Ղեկային մեխանիզմի կափյուրի հանման տեղադրման ծառայություն	հատ	68000
103	Ղեկային մեխանիզմի կափյուրի վերանորոգման ծառայություն	հատ	60000
104	Ղեկային մեխանիզմի կափյուրի մաքրման ծառայություն	հատ	30000
	VIII Կարդանային լիսեռներ		
105	Կարդանային լիսեռի հանման տեղադրման ծառայություն	հատ	48000
106	Կարդանային լիսեռի վերանորոգման ծառայություն	հատ	35000
	IX Արգելակներ		
107	Մեկ հատ արգելակման ժապավենի հանման տեղադրման ծառայություն	հատ	385000
108	Արգելակման թմբուկի վերանորոգման ծառայություն	հատ	145000
109	Խցուկի միջադիր փոխարինման ծառայություն	հատ	27000
	X Խցիկ		
110	Խցիկի հանման և տեղադրման ծառայություն	հատ	15000
	XI Հարթակ		
111	Հարթակի հանման և տեղադրման ծառայություն	հատ	35000
	XII Ընթացքային մաս		
112	Թրթուրի անջատման և միացման ծառայություն	հատ	38000
113	Ուղղապահի հանման տեղադրման ծառայություն	հատ	80000
114	Ուղղապահի վերանորոգման ծառայություն	հատ	150000
115	Թրթուրի ձգման մեխանիզմի հանման տեղադրման ծառայություն	հատ	135000
116	Թրթուրի ձգման մեխանիզմի վերանորոգման ծառայություն	հատ	110000
117	Տելեշկայի հանման տեղադրման ծառայություն	հատ	80000
118	Տելեշկայի վերանորոգման ծառայություն	հատ	1000000
119	Կողային շփանակի քանդման և հավաքման ծառայություն	հատ	500000
120	Կողային շփանակի վերանորոգման ծառայություն	հատ	210000
121	Կողային շփանակի խցուկի հանման տեղադրման ծառայություն	հատ	48000
122	Կողային շփանակի խցուկի կամ միջադիրների փոխարինման ծառայություն	հատ	58000
123	Գլդոնի հանման տեղադրման ծառայություն	հատ	45000
Ընդամենը		**7836100**	
	Նորոգման ընթացքում օգտագործված պահեստամասերի անվանումները		
	I ՇԱՐԺԻՉ		
124	Շարժիչի հիմնական ներդրակ	հատ	350000
125	Շարժիչի հիմնական ներդրակ (8401.12 շարժիչի)	հատ	48000
126	Շարժիչի շարժաթևային ներդրակ	հատ	280000
127	Շարժիչի մեկ հատ մխոցի մխոցային օղ	հատ	36000
128	Շարժիչի մեկ հատ գլան	հատ	90000
129	Շարժիչի մեկ հատ մխոց	հատ	95000
130	Շարժիչի մխոցի մեկ հատ մխոցամատ	հատ	13000
131	Շարժիչի մեկ հատ շարժաթև	հատ	228000
132	Շարժիչի մեկ հատ շարժաթև (8401.12 շարժիչի)	հատ	124000

192	Հիդրավլիկայի պոմպ	հատ	1150000
193	Հիդրոգլանի խնձորակ	հատ	100000
194	Հիդրոգլանի կափյուր	հատ	280000
195	Հիդրոգլանի կափյուրի վերանորոգման լրակազմ	հատ	120000
	VII Փոխանցման տուփ		
196	Փոխանցման տուփ	հատ	8400000
197	Փոխանցման տուփի կափույր	հատ	1000000
198	Փոխանցման տուփի վերանորոգման լրակազմը	հատ	330000
199	Փոխանցման տուփի մեկ հատ օղ	հատ	100000
200	Փոխանցման տուփի մեկ հատ սկավառակ	հատ	85000
201	Փոխանցման տուփի թողարկիչ կափույր	հատ	750000
202	Ղեկային մեխանիզմի պոմպ	հատ	650000
203	Ղեկային մեխանիզմի կափյուր	հատ	800000
204	Ղեկային մեխանիզմի կափյուրի վերանորոգման լրակազմ	հատ	330000
	VIII Կարդանային լիսեռներ		
205	Կարդանային լիսեռ	հատ	440000
206	Կարդանային լիսեռի վերանորոգման լրակազմ	հատ	160000
	IX Արգելակներ		
207	Արգելակման թմբուկի վերանորոգման լրակազմ	հատ	750000
208	Արգելակման թմբուկ	հատ	970000
209	Խցուկի միջադիր	հատ	40000
	XII Ընթացքային մաս		
210	Ուղղապահ լրակազմ	հատ	2600000
211	Ուղղապահի վերանորոգման լրակազմ	հատ	630000
212	Թրթռուրի ձգման մեխանիզմ	հատ	950000
213	Թրթռուրի ձգման մեխանիզմի վերանորոգման լրակազմ	հատ	330000
214	Թրթռուրի ուղղապահի սեղման մեխանիզմ	հատ	1200000
215	Կողային շփանակ	հատ	2500000
216	Կողային շփանակի լրակազմ	հատ	980000
217	Կողային շփանակի խցուկ	հատ	380000
218	Կողային շփանակի միջադիր	հատ	460000
219	Գլդոն միակողապատ	հատ	620000
220	Գլդոն երկկողապատ	հատ	620000
221	Օժանդակիչ գլդոն	հատ	340000
Ընդամենը			**74894500**
Ընդհանուրը			***82730600***

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մեժլում Գրիգորյան

Անհատ ձեռնարկատեր

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-4/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ								
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում /Կամացու Դ-355 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ/)	50531100/2/4/1	16500000	16500000	16500000	26500000	26500000	26500000	33000000	33000000	33000000

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Մեժլում Գրիգորյան

Անհատ ձեռնարկատեր

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-4/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-4/1-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն